ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3

Գյուտեր և օգտակար մոդելներ 4

Ապրանքային նշաններ և արդյունաբերական նմուշներ 7

Տեղեկատվական տեխնոլոգիաներ 11

Գրանցված օբյեկտների նկատմամբ
իրավունքների փոխանցումը, լիցենզիաների
տրամադրումը և իրավունքների պահպանության
ժամկետների երկարաձգումը.....13

Միջազգային համագործակցություն 15

Հրատարակվում է Մտավոր սեփականության գործակալության կողմից

Խմբագրական կոլեգիա՝ Արմեն ԱԶԻԶՅԱՆ
Անդրանիկ ԽԱՉԻԿՅԱՆ
Արփինե ԵԳԱՆՅԱՆ
Սուսաննա ԴԱՎԹՅԱՆ
Դիզայնը և էջադրումը՝ Կարինե ՄԵԼՈՅԱՆԻ

0010, Երևան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. 011 597 537 հայտերի ընդունման բաժին
Հեռ. 011 597 535 տեղեկատվական-տեխնոլոգիական ապահովման բաժին
Internet: www.aipa.am
E-mail: armpat@aipa.am

© ՀՀ մտավոր սեփականության գործակալություն

ՆԱԽԱԲԱՆ

Մտավոր սեփականության բնագավառի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան Մտավոր սեփականության գործակալությունը 2015 թվականին շարունակեց արդյունաբերական սեփականության օբյեկտների իրավական պահպանության ապահովման հետ կապված իր հիմնական գործառույթների իրականացումը՝ ապահովելով գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների հայտերի ընդունման, փորձաքննության անցկացման, պահպանական փաստաթղթերի տրամադրման, ինչպես նաև պաշտոնական տեղեկությունների հրապարակման և իր կանոնադրությամբ նախատեսված այլ աշխատանքների կատարումը:

ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ

2015 թվականին Մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել 115 գյուտի և 55 օգտակար մոդելի հայտ, որոնցից 167-ը՝ ազգային հայտատուներից, 3-ը՝ օտարերկրյա հայտատուներից:

2015 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ստացված գյուտերի և օգտակար մոդելների հայտերի ընդհանուր քանակը 1992 թվականից սկսած կազմել է 4202:

Աղյուսակ 1

Երկիրը	2014	2015
Հայաստան	175	167
Այլ երկրներ	6	3
Ընդամենը	**181**	**170**

2014 թվականի համեմատությամբ 2015 թվականին ստացված հայտերի ընդհանուր քանակը պակասել է 11-ով, ընդ որում՝ ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը պակասել է 8-ով, իսկ օտարերկրյա հայտատուներից ստացված հայտերի քանակը պակասել է 3-ով:

Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի ընթացակարգով Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Միջազգային բյուրո (ԺՆև) ներկայացվող միջազգային և Եվրասիական արտոնագրային կոնվենցիայի ընթացակարգով Եվրասիական արտոնագրային գերատեսչություն (Մոսկվա) ներկայացվող եվրասիական հայտերով գործակալությունը հանդես է գալիս որպես ստացող գերատեսչություն միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող ֆիզիկական անձանց համար:

2015 թվականին գործակալությունը ստացել է 4 միջազգային հայտ, ստուգել է անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը, դրանց համապատասխանությունը սահմանված պահանջներին և արդյունքում սահմանել է միջազգային հայտերի ներկայացման թվականը և այդ թվականից մեկամսյա ժամկետում դրանք առաքել է Միջազգային բյուրո:

Այսպիսով, 1994-2015 թվականների ժամանակահատվածում Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Միջազգային բյուրո առաքվել է գյուտի 85 միջազգային հայտ:

2015 թվականին գործակալությունը ստացել է 2 եվրասիական հայտ, ստուգել է անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը, դրանց համապատասխանությունը սահմանված պահանջներին և արդյունքում սահմանել է եվրասիական հայտի ներկայացման թվականը և այդ թվականից մեկամսյա ժամկետում դրանք առաքել է Եվրասիական արտոնագրային գերատեսչություն:

Այսպիսով, 1997-2015 թվականների ժամանակահատվածում Եվրասիական արտոնագրային գերատեսչություն առաքվել է գյուտի 39 եվրասիական հայտ:

Հաշվետու ժամանակաշրջանում գործավարությունն ավարտվել է 162 հայտով, ընդ որում՝ 82 հայտով կայացվել են որոշումներ գյուտի հայտը պաշտոնական տեղեկագրում հրապարակելու և արտոնագիր տալու մասին, 51 հայտով կայացվել են որոշումներ օգտակար մոդելի հայտը պաշտոնական տեղեկագրում հրապարակելու և արտոնագիր տալու մասին, 20 հայտով կայացվել են որոշումներ գյուտի (օգտակար մոդելի) հայտը հետ կանչված համարելու մասին, 7 հայտով կայացվել է որոշում գյուտի արտոնագիր տալն ամբողջությամբ մերժելու մասին, 2 հայտով կայացվել է որոշում օգտակար մոդելի արտոնագիր տալն ամբողջությամբ մերժելու մասին:

Հայտերի քննարկման արդյունքները դիագրամի տեսքով բերված են նկ.1-ում:

2015 թվականին ազգային և օտարերկրյա հայտատուներից ստացված հայտերի բաշխումն ըստ Միջազգային արտոնագրային դասակարգման բաժինների բերված է նկ. 2-ում՝ գրաֆիկի տեսքով: 2015 թվականին ստացված հայտերի բաշխումն ըստ տեխնիկայի բնագավառների բերված են աղյուսակ 2-ում:

2015 թվականին տրվել է գյուտի 81 արտոնագիր և օգտակար մոդելի 50 արտոնագիր, որոնցից օտարերկրյա հայտատուներին տրվել է օգտակար մոդելի 6 արտոնագիր:

2015 թվականին տվյալների համաձայն Հայաստանի Հանրապետության 2985 գյուտի արտոնագրերից Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են 248–ը, իսկ օգտակար մոդելի 434 արտոնագրերից գործում են 116-ը:

2015 թվականի տվյալների համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են 3714 Եվրասիական արտոնագրեր:



Նկ. 1

Արտոնագիր տալու մասին որոշում ստացած հայտեր

Հայտը հետ կանչված ճանաչելու և արտոնագիր տալը մերժելու մասին որոշում ստացած հայտեր



Նկ. 2

A. Մարդու կենսական պահանջների բավարարում
B. Տարբեր տեխնոլոգիական պրոցեսներ, տրանսպորտ
C. Քիմիա, մետաղագործություն
D. Մանածագործություն, թուղթ
E. Շինարարություն, լեռնագործություն
F. Մեխանիկա, լուսավորություն, ջեռուցում, շարժիչներ և պոմպեր, զենք և ռազմամթերք, պայթեցման աշխատանքներ
G. Ֆիզիկա
H. Էլեկտրականություն

Աղյուսակ 2

No	Բնագավառը (ըստ ՄԱԴ-ի դասի/ենթադասի)	Ներկայացված հայտերի քանակը	%-ը հայտերի ընդհանուր թվի մեջ
1.	Անօրգանական քիմիա (C01-C05, C30)	16	9,41%
2.	Բժշկություն և անասնաբուժություն (A61-A63, բացառությամբ A61K)	15	8,82%
3-5.	Չափում և օպտիկա (G01-G03)	14	8,24%
3-5.	Նյութերի մշակում, շերտավոր նյութեր (B21-B30, B32)	14	8,24%
3-5.	Տրանսպորտ (B60-B68)	14	8,24%
6.	Շինարարություն (E01-E06)	12	7,06%
7.	Էլեկտրական տեխնիկա (H01, H02, H05)	11	6,47%
8.	Շարժիչներ և պոմպեր (F01-F04)	9	5,29%
9-10.	Սննդամթերք և ծխախոտ (A21-A24)	8	4,71%
9-10.	Գյուղատնտեսություն (A01, բացառությամբ A01N)	8	4,71%
11.	Կենսաքիմիա, շաքար, կաշիներ (C12-C14)	6	3,53%
12-26.	Այլ բնագավառներ	43	25,28%
	Ընդամենը	**170**	**100**

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ

2015 թվականին ազգային ընթացակարգով ստացվել են ապրանքային նշանների գրանցման 1895 հայտ (որոնցից 1340-ը՝ ազգային հայտատուներից), որոնց բաշխումն ըստ հայտատուների երկրների դիագրամի տեսքով բերված է նկ. 3-ում:

Ապրանքային նշանների 1878 հայտով կատարվել է նախնական փորձաքննություն: Համարվել են հետ կանչված 28 հայտ, 148 հայտով կայացվել է ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշումներ:

Գրանցվել են 1488 ապրանքային նշաններ (որոնցից 1039-ը՝ ազգային հայտատուների անունով): Նշանների միջազգային գրանցման մասին Մադրիդյան համաձայնագրի և դրա արձանագրության շրջանակներում Հայաստանի Հանրապետության նշմամբ ստացվել է ապրանքային նշանների միջազգային գրանցման մասին 3149 ծանուցում: Միջազգային ծանուցումներով կայացվել են 1921 որոշում ապրանքային նշանին իրավական պահպանություն տրամադրելու վերաբերյալ, նախնական մերժման մասին

Նկ. 3



կայացվել է 600 որոշում, իսկ վերջնական մերժման մասին՝ 599:

Հայտերի բաշխումն ըստ հայտատուների երկրների բերված է աղյուսակ 2-ում:

Հայաստանի Հանրապետությունից ներկայացվել է միջազգային գրանցման 20 հայտ:

2014 թվականին համեմատությամբ 2015 թվականին ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը նվազել է՝ 1341-ի դիմաց (2014թվականի) 1340 հայտ:

Ինչ վերաբերում է օտարերկրյա իրավաբանականանձանցակտիվությանը, ապա այն նվազել է ազգային ընթացակարգով (609-ի (2014թվականի) դիմաց 555 հայտ):

Հաշվետու ժամանակաշրջանում Մտավոր սեփականության գործակալություն ազգային ընթացակարգով ներկայացվել է 38 արդյունաբերական նմուշի հայտ (29-ը՝ ազգային հայտատուներից), որոնցից 32-ը ստացել են վկայագիր:

2014 թվականի համեմատությամբ 2015 թվականին արդյունաբերական նմուշի հայտերի քանակը աճել է՝ ազգային հայտատուներից ստացված՝ 25-ի դիմաց (2014թվականի) 29 հայտ, իսկ օտարերկրյա հայտատուներինը՝ 4-ի դիմաց (2014 թվականի) 9 հայտ:

Արդյունաբերական նմուշների Հաագայի համաձայնագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության նշմամբ ստացվել է արդյունաբերական նմուշների միջազգային գրանցման մասին 237 ծանուցում:

Աղյուսակ 3

Երկիրը		Ըստ ազգային ընթացակարգի	Մադրիդյան համաձայնագրի և դրան կից արձանագրության շրջանակներում	Ընդամենը
AM	Հայաստան	1340		1340
AE	Արաբական Միացյալ Ամիր.	8	3	11
AT	Ավստրիա		47	47
AU	Ավստրալիա		8	8
BB	Բարբադոս		3	3
BE	Բելգիա		59	59
BG	Բուլղարիա	1	33	34
BM	Բերմուդա		5	5
BR	Բրազիլիա	7		7
BY	Բելառուս		33	33
BZ	Բելիզ	4	8	12
CA	Կանադա	3	3	6
CH	Շվեյցարիա	69	240	309
CN	Չինաստան	11	190	201
CO	Կոլումբիա		2	2
CU	Կուբա	2		2
CY	Կիպրոս	7	60	67
CZ	Չեխիայի Հանրապետություն	2	17	19
DE	Գերմանիա	19	320	339
DK	Դանիա	1	25	26
EE	Էստոնիա		4	4
EG	Եգիպտոս		5	5
ES	Իսպանիա	1	53	54
FI	Ֆինլանդիա		15	15
FR	Ֆրանսիա	9	145	154
GB	Միացյալ Թագավորություն	28	105	133
GE	Վրաստան	13	7	20
GR	Հունաստան		6	6
HK	Հոնգ Կոնգ	5		5
HU	Հունգարիա		210	210
IE	Իռլանդիա	9	14	23
IL	Իսրայել	1	4	5
IN	Հնդկաստան	19	9	28
IR	Իրան	1	20	21
IS	Իսլանդիա		4	4
IT	Իտալիա		131	131
JP	Ճապոնիա	17	60	77

KR	Կորեայի Հանրապետություն	21	26	47
KY	Կայմանյան կղզիներ	22		22
KZ	Ղազախստան	2	15	17
LI	Լիխտենշտայն		17	17
LV	Լատվիա	19	18	37
LT	Լիտվա		3	3
LU	Լյուքսեմբուրգ	1	51	52
MA	Մարոկկո		5	5
MC	Մոնակո		3	3
MD	Մոլդովայի Հանրապետություն		11	11
MK	Մակեդոնիայի Հանրապետություն	2	1	3
MT	Մալթա	1		1
MX	Մեքսիկա	2	1	3
NL	Նիդերլանդներ	3	64	67
NO	Նորվեգիա		2	2
NZ	Նոր Զելանդիա		5	5
PA	Պանամա		3	3
PL	Լեհաստան		41	41
PT	Պորտուգալիա	2	5	7
RO	Ռումինիա		4	4
RU	Ռուսաստանի Դաշնություն	57	420	477
SA	Սաուդյան Արաբիա	3		3
SC	Սեյշելյան կղզիներ		5	5
SE	Շվեդիա	2	21	23
SG	Սինգապուր		7	7
SI	Սլովենիա	2	20	22
SK	Սլովակիա		6	6
SM	Սան Մարինո		2	2
TR	Թուրքիա	2	130	132
TW	Տայվան	3		3
UA	Ուկրաինա	3	101	104
USA	ԱՄՆ	169	285	454
UZ	Ուզբեկստան		5	5
VG	Վիրջինյան կղզիներ	1	16	17
	Այլ	1	8	9
Ընդամենը		1895	3149	5044

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

2015 թվականին հրապարակվել են «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրի 12 համար՝ հայերեն և ռուսերեն լեզուներով: Տեղեկագրերում ընդգրկվել են պաշտոնական տեղեկություններ 81 գյուտի, 50 օգտակար մոդելի արտոնագրերի, 32 արդյունաբերական նմուշի վկայագրերի, 1488 գրանցված ապրանքային նշանների մասին, ընդգրկվել են նաև տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման, ինչպես նաև տեղեկություններ արտոնագրերի և ապրանքային նշանների զիջման պայմանագրերի և լիցենզային պայմանագրերի գրանցման մասին:

2015 թվականին հրապարակվել է «Ապրանքային նշանների հայտեր» տեղեկագրի 24 համար:

Իրականացվել է գյուտերի և օգտակար մոդելների գծագրերի ներմուծումը, առաջին էջերի, լրիվ նկարագրությունների և հավակնության սահմանումների էլեկտրոնային ձևերի, ինչպես նաև արդյունաբերական նմուշների նկարների ներմուծումը և հրապարակումը՝ արտոնագրատերերին, գրադարաններին փոխանցելու համար, գործակալության համակարգչային ցանցում ներքին օգտագործման համար, ինչպես նաև համընդհանուր օգտագործման նպատակով:

Իրականացվել է 2014 թվականի «Տարեկան հաշվետվություն» տեղեկագրի նախապատրաստումը և հրապարակումը հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով և դրանց էլեկտրոնային ձևերի պատրաստումը ինտերնետային էջում տեղադրելու համար:

Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն (ՄՍՀԿ) ներկայացնելու համար պատրաստվել են 2014 թվականի տեխնիկական և վիճակագրական հաշվետվությունները գյուտերի և օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների վերաբերյալ:

Գործակալությունը շարունակել է Գիտատեխնիկական լրատվության հայկական կենտրոնի արտոնագրային ֆոնդի համալրումը: Կենտրոնին տրամադրվել է օտարերկրյա պետությունների արտոնագրային գերատեսչություններից ստացված տեղեկատվությունը:

Ի կատարումն «էլեկտրոնային կրիչների վրա արտոնագրային տեղեկատվական տարածաշրջանային համատեղ արտադրանքի թողարկման մասին» համաձայնագրի, թողարկվել են «CIS-PATENT» անվանմամբ 12 էլեկտրոնային կրիչներ, որտեղ զետեղված են Հայաստանի Հանրապետությունում արտոնագիր ստացած 81 գյուտի և 50 օգտակար մոդելի մասին մատենագիտական տվյալներ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Վերոհիշյալ համաձայնագրի կատարման աշխատանքներն ընթացքում են:

2015 թվականին շարունակվել է Հայաստանի Հանրապետությունում գրանցված գյուտերի և օգտակար մոդելների մասին տվյալների փոխանցումը Եվրասիական արտոնագրային գերատեսչություն՝ տեղեկատվական որոնման համակարգի

հիմնապաշարի համալրման նպատակով:

2015 թվականի ընթացքում ներդրվել են «Աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների, երաշխավորված ավանդական արտադրանքների» և «Լիցենզային պայմանագրերի գրանցման», գործավարության համար նախատեսված վեբ-տեխնոլոգիաների հիման վրա ստեղծված նոր համակարգերը:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են գործակալության աշխատանքների ավտոմատացումը և տեխնիկական վերազինումը: Գործակալությունը վերազինվել է սերվերով, համակարգչային օժանդակ սարքերով և սարքավորումներով: Վերացվել են գործակալության տեղեկատվական համակարգի մեջ շահագործման ընթացքում ի հայտ եկած թերությունները և բացթողումները:

Իրականացվել է համակարգչային ծրագրերի տեղադրում և կարգաբերում, վնասված համակարգիչների և ծրագրերի ախտորոշում և անսարքության վերացում:

ԳՐԱՆՑՎԱԾ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ, ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԵՐԿԱՐԱՁԳՈՒՄԸ

Մտավոր սեփականության բնագավառի ՀՀ օրենսդրությանը համապատասխան գործակալությունը սկսած 1995 թվականից իրականացնում է արդյունաբերական սեփականության գրանցված օբյեկտների նկատմամբ իրավունքների փոխանցման և լիցենզիաների տրամադրման հետ կապված դիմումների քննարկումը և պայմանագրերի գրանցումը:

Հաշվետու ժամանակաշրջանում քննարկվել և գրանցվել են 1634 դիմում, որոնցից 119-ը՝ ապրանքային նշանների նկատմամբ իրավունքների փոխանցումը գրանցելու մասին, 9-ը՝ ապրանքային նշանների լիցենզիաները գրանցելու մասին, 3-ը՝ ապրանքային նշանների ենթալիցենզիաների մասին և 3-ը՝ ապրանքային նշանների լիցենզիայի փոփոխությունը գրանցելու մասին, ինչպես նաև 2-ը՝ գյուտի արտոնագրային ոչ բացառիկ լիցենզիա տալու մասին, 2-ը՝ արտոնագրի զիջում, 2-ը՝ ապրանքային նշանների լիցենզիաների չեղյալ հայտարարում, 1293-ը՝ ապրանքային նշանների գործողության ժամկետների երկարաձգում, 201-ը՝ գյուտերի, օգտակար մոդելների արտոնագրերով վերապահված և արդյունաբերական նմուշի գրանցումից բխող իրավունքների պահպանության ժամկետների երկարաձգում:

Ապրանքային նշանների նկատմամբ իրավունքների փոխանցման պայմանագրերը կնքվել են ինչպես ազգային, այնպես էլ օտարերկրյա իրավաբանական անձանց միջև:

Վերջին հինգ տարիներին գրանցված իրավունքների փոխանցման և լիցենզիաների տրամադրման պայմանագրերի թիվը բերված է աղյուսակ 4-ում:

«Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67–րդ հոդվածի և «Ապրանքային նշանների գրանցման գործողության ժամկետի երկարաձգման մասին դիմումների ձևակերպման և քննարկման» կարգի համաձայն գործակալությունը իրականացրել է 1293 ապրանքային նշանների գործողության ժամկետների երկարաձգում, ինչպես նաև 201 գյուտի, օգտակար մոդելի արտոնագրերով վերապահված և արդյունաբերական նմուշի գրանցումից բխող իրավունքների պահպանության ժամկետների երկարաձգում:

2015 թվականի ընթացքում պատրաստվել և իրավատերերին է հանձնվել 1415 ապրանքային նշանի վկայագրեր, 77 գյուտի արտոնագրեր, 50 օգտակար մոդելի արտոնագրեր և 32 արդյունաբերական նմուշի վկայագրեր: Ապրանքային նշանների պետական գրանցամատյանում կատարվել է 160 փոփոխություն:

Աղյուսակ 4

	2010	2011	2012	2013	2014	2015
Իրավունքի փոխանցման պայմանագրեր	72	56	101	79	81	121
Լիցենցիայի, ենթալիցենզիայի տրամադրման պայմանագրեր և պայմանագրերում կատարված փոփոխություններ	19	24	25	31	34	17
Ֆրանչայզինգի պայմանագրեր	-	1	5	2	1	0
Գրավադրման պայմանագրեր	-	2	1	4	62	0
Գրանցված պայմանագրերի ընդհանուր թիվը	91	83	132	116	178	138

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Միջազգային համագործակցության շրջանակներում Մտավոր սեփականության գործակալությունը համագործակցում է միջազգային կառույցների, ինչպես նաև օտարերկրյա նմանատիպ կազմակերպությունների հետ:

Հաշվետու ժամանակաշրջանում գործակալության մասնագետները մասնակցել են ՄՍՀԿ, ԵԱԱԳ կողմից կազմակերպվող սեմինարներին, գործնական հանդիպումներին և որակավորման բարձրացման դասընթացներին:

2015 թվականի հոկտեմբերին Մտավոր սեփականության գործակալությունը հյուրընկալեց Միացյալ Նահանգների Կոլումբիայի համալսարանի հեղինակային իրավունքի խորհրդատվության բաժնի ղեկավար, հեղինակային իրավունքի սահմանափակումների մասնագետ դոկտոր Քենեթ Կրուզին և ԷՏԳՀ «Էլեկտրոնային տեղեկատվություն գրադարանների համար» կազմակերպությունում նախագծի ղեկավար Թերեզա Հեքեթին: Հանդիպման ժամանակ քննարկվեցին հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների սահմանափակումները, առաջարկություններ եղան ընդլայնել սահմանափակումների շրջանակը: